



Ներկաները ջերմ ծափահարություններով դիմավորեցին ֆիլմի ռեժիսոր Արա Երջանկյանին, գլխավոր դերակատարներ Լուիզա Ներսիսյանին և Դավիթ Քացարավային:

Ողջունելով հյուրերին և ներկա հասարակայնությանը, Վիրահայոց Թեմի «Հայարտուն» մշակույթի կենտրոնի աշխատակազմի ղեկավար և համակարգող Լևոն Զիդիլյանը ներկայացրեց կենտրոնի գործունեության նպատակը և բնագավառները:

Խոսելով Վրաստանի զարգացման և առաջընթացի գործում երկրի հայազգի քաղաքացիների ունեցած ներդրման մասին, պատգամավորության թեկնածու Գիորգի Վաշաձեն կարևորեց այն դերն ու նշանակությունը, որ կատարում է մշակույթը երկու դրկից ժողովուրդների բարեկամության զարգացման և խորացման գործում: Նա առանձնահատուկ ընդգծեց մայրաքաղաքի հայահոծ Հավլաբար թաղամասը, որտեղ հանձինս հայ եկեղեցու մշակույթի կենտրոնի և Պետրոս Ադամյանի անվան թատրոնի ծավալած գործունեության իրականացվում են հայ-վրացական համատեղ մշակութային ծրագրեր, կյանքի կոչվում նորանոր նախագծեր:

Երևանից ժամանած հյուրերը, ֆիլմի հերոսները ջերմությամբ պատմեցին ֆիլմի նկարահանման աշխատանքների, ռեժիսորի մեծավարպետության և դերակատարների անզուգական խաղի մասին:

Բոլոր բանագնացները կարևորեցին հայ-վրացական բարի դրացիական հարաբերությունները կինոֆիլմերի միջոցով լայն հասարակայնությանը ներկայացնելու, նման նախագծերը շարունակական դարձնելու անհրաժեշտությունը:

Ֆիլմի ստեղծագործական կոլեկտիվը և հանդիպման հյուրերը պատասխանեցին ներկաների հարցերին: